ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ANQA-2021/59

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 հոկտեմբերի 2021 թ. N 59

«ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊՈԱԿ-Ի ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը՝	«Գորիսի պետական համալսարան» ՊՈԱԿ /ԳՊՀ/
Գործունեության հասցեն՝	ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Գորիս, Ավանգարդի փ., 2
Նախորդ հավատարմագրման մասին որոշումը և ժամկետը՝	**պայմանական ինստիտուցիոնալ հավատարմագրում, 2 տարի ժամկետով՝ 12.04.2018թ.- 12.04.2020թ**

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով, «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, 2021 թվականի հոկտեմբերի 22-ին Հավատարմագրման Հանձնաժողովի նիստում քննարկեց «Գորիսի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ ԳՊՀ, Համալսարան) ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման հարցը:

Հավատարմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

դիմում-հայտի ներկայացում՝	18 սեպտեմբերի 2019թ.
վերանայված ինքնավերլուծության ներկայացում՝	6 ապրիլի 2020թ.
փորձագիտական այցի իրականացում՝	26-29 ապրիլի 2021թ.
փորձագիտական զեկույցի ներկայացում՝	23 հուլիսի 2021թ.
թերությունների վերացման ծրագրի ներկայացում՝	3 սեպտեմբերի 2021թ.

«Գորիսի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներից **«Հետազոտություն և զարգացում», «Արտաքին կապեր և միջազգայնացում», «Որակի ներքին ապահովման համակարգ»** չափանիշները գնահատվել են անբավարար:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով ԳՊՀ-ի կողմից ներկայացված ինքնավերլուծությունը, փորձագիտական զեկույցը, զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների ծրագիրը, լսելով փորձագիտական գնահատման վերաբերյալ Հանձնաժողովի նախագահի կողմից ընտրված երեք անդամների եզրակացությունները, որոնք ձևավորվել են փորձագիտական խմբի անդամների և ԳՊՀ-ի ներկայացուցիչների հետ հանդիպումների արդյունքում, ինչպես նաև հանձնաժողովի անդամների դիտարկումներն ու առաջարկությունները, ամրագրեց հետևյալը.

ԳՊՀ-ն 2018 թվականին ստացել է պայմանական ինստիտուցիոնալ հավատարմագրում 2 տարի ժամկետով և, հաշվի առնելով հավատարմագրման գործընթացի շրջանակում ստացված խորհրդատվությունները, կազմել է բարելավման գործողությունների ծրագիր: Համալսարանը մի շարք ոլորտներում իրականացրել է բարելավմանը միտված փոփոխություններ:

1. ***Համալսարանը հիմնականում ապահովում է որակավորումների արժանահավատ շնորհում***

ԳՊՀ-ի կրթական ծրագրերը հիմնականում համահունչ են առաքելությանը, նախորդ հավատարմագրումից հետո վերանայված ՄԿԾ-ներում առկա է մանրամասն նկարագիր՝ ըստ շնորհվող որակավորումների և ակնկալվող ուսումնառության արդյունքների: Բարելավվել են դասավանդման և ուսումնառության մեթոդները, քայլեր են կատարվել ըստ ուսումնառության ակնկալվող արդյունքների դասավանդման և գիտելիքի գնահատման մեթոդների համապատասխան ընտրություն ապահովելու համար: Ստեղծվել է կրթական ծրագրերի պատասխանատուների ինստիտուտը: Ներդրվել են ՄԿԾ-ների մշտադիտարկման և բարելավման որոշ մեխանիզմներ, ինչպես նաև ստեղծվել են ակադեմիական բարեվարքության ապահովման հիմքեր:

Բուհում գործում են պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ձևավորման մեխանիզմներ, առկա է ըստ ՄԿԾ-ների ներկայացվող պահանջների համապատասխան քաղաքականություն: Մշակված են նաև նրանց գործունեության գնահատման որոշ մեխանիզմներ, ներդրված են փորձի փոխանակման հնարավորություններ: Առկա են նաև դասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման և կատարելագործման որոշ մեխանիզմներ: Բուհը հիմնականում ապահովված է համապատասխան վարչական և ՈւՕ կազմերով, ներգրավում է ոնաև պրակտիկ փորձառությամբ մասնագետների:

Համալսարանը կարողացել է ստեղծել համապատասխան ուսումնական միջավայր, ունի ֆինանսների կառավարման հստակ քաղաքականություն, իրականացնում է ֆինանսների

արդյունավետ բաշխում և կառավարում սահմանափակ բյուջեի պայմաններում: Նախորդ հավատարմագրումից հետո կատարվել են ներդրումներ ուսումնական միջավայրի բարելավման նպատակով (որոշ բարելավումներ իրականացվել են նաև միջազգային ծրագրերի միջոցներով): Կրթական ծրագրերի նպատակների իրագործման համար բարելավվել է ռեսուրսային բազան, շարունակական քայլեր են կատարվում անվտանգ միջավայրի ապահովման ուղղությամբ: Ապահովվում է փաստաթղթաշրջանառության գործընթացը, գործածվում են տեղեկատվության կառավարման որոշ մեխանիզմներ: Ներդրվել են կիրառվող ռեսուրսների արդյունավետության գնահատմանն ուղղված որոշ մեխանիզմներ: Համալսարանի ռեսուրսների բազան թեև հարուստ չէ, սակայն բավարար է ՄԿԾ-ների իրականացման համար: ԳՊՀ-ում նաև մշտապես աշխատանքներ են իրականացվում շենքային պայմանների բարելավման ուղղությամբ:

Բուհը հիմնականում ապահովում է որակավորումների արժանահավատ շնորհում, առկա են թերացումներ, որոնք բարելավման ծրագրի իրականացման դեպքում կարող են շտկվել:

2. Կառավարման և որակի ապահովման համակարգերը հիմնականում աջակցում են որակավորումների շնորհման արժանահավատության բարելավմանը

Համալսարանում ստեղծված է կառավարման հստակ համակարգ, որը հիմնականում համալրված է համապատասխան մարդկային ու անհրաժեշտ նյութական ռեսուրսներով, որի բարելավման ուղղությամբ շարունակական աշխատանքներ են իրականացվում: Համալսարանը կարևորում է ռազմավարական կառավարումը և այս ուղղությամբ կատարված որոշ աշխատանքներ տեսանելի են, սակայն երկարաժամկետ, միջնաժամկետ և կարճաժամկետ պլանավորումները և ըստ դրանց հաշվետվողականության համակարգը դեռևս հստակ փոխկապակցված չեն:

Համալսարանը կարևորում է որակի ապահովման գործընթացները, առկա է համապատասխան ստորաբաժանում, աշխատանքներ են իրականացվել որակի ապահովման գործընթացների հետ կապված որոշակի փաստաթղթային հենք ստեղծելու ուղղությամբ, նաև հարցումներ են իրականացնում: Սակայն որակի ապահովման ներքին համակարգը դեռևս հստակ ձևավորված չէ, թույլ է արտահայտված վերջինիս ազդեցությունը որոշումների կայացման և բարելավումների վրա: Ներքին և արտաքին շահակիցների դերը հստակեցված չէ այդ համակարգում և նրանց ներգրավվածությունը որակի ապահովման գործընթացներում դեռևս թույլ է:

Կառավարումն ու որակի ապահովման համակարգերը ձևավորման փուլում են, սակայն առկա են զարգացման միտումներ և կառավարումը միտված է որակի բարելավմանը, որակավորումների արժանահավատ շնորհմանը:

3. Միջազգայնացումն ու հետազոտական/ստեղծագործական գործունեությունը զարգացման միտումներ ունեն:

ԳՊՀ-ն սահմանել է հետազոտության ոլորտում գերակայություններ և հավակնություններ, ստեղծել է Գիտական կենտրոն, սակայն դրանց խզումը ապահովված արդյունքների հետ մեծ է:: Հստակ չէ ոլորտի ռազմավարական կառավարումը, ցածր են հետազոտության արդյունքների ցուցանիշները, բացակայում է հետազոտության ոլորտում միջազգայնացման քաղաքականությունը, առկա չեն համագործակցությամբ պայմանավորված շոշափելի արդյունքներ: Թույլ է ուսումնառության և հետազոտության փոխկապակցման մեխանիզմների

արդյունավետությունը, ավարտական աշխատանքներում և մագիստրոսական թեզերում հետազոտական, կիրառական և վերլուծական բաղադրիչը գրեթե բացակայում է:

Համալսարանում թեև սահմանված են կոնկրետ հավակնություններ, սակայն միջազգայնացման ուղղությամբ ռազմավարությունը չի բխում բուհի հնարավորություններից: Արտաքին հարաբերություններում առաջնահերթ է տեղական կազմակերպությունների հետ կապերի ձևավորումը, ինչն արդյունավետորեն իրականացվում է և նպաստում է որակավորումների արժանահավատ շնորհմանը:

ԳՊՀ-ում առկա են հաշվետվողականության հստակ սահմանված քաղաքականություն, ներքին և արտաքին շահակիցների առջև հաշվետվողականության ապահովման մեխանիզմներ, ընթացակարգ, նախորդ հավատարմագրումից հետո ձեռնարկել է քայլեր իր գործունեության թափանցիկության և հասանելիության, կայուն հետադարձ կապի ապահովման մեխանիզմների բարելավման ուղղությամբ, կան նաև հասարակությանը գիտելիքի փոխանցման որոշ մեխանիզմներ:

4. Առկա են թերացումներ, որոնք առանցքային ազդեցություն չունեն որակավորման արժանահավատ շնորհման տեսանկյունից, ստեղծված են հիմքեր բարելավումների համար:
5. Փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման ծրագիրը հիմնականում իրատեսական է և արտահայտում է խնդիրների ճիշտ ընկալումը, որոնց իրականացումը կբերի որակական փոփոխությունների:

Ելնելով վերը նշվածից, Հավատարմագրման Հանձնաժողովը բաց քվեարկության արդյունքում

ՈՐՈՇԵՑ

1. **«Գորիսի պետական համալսարան» ՊՈԱԿ-ին** շնորհել ինստիտուցիոնալ **հավատարմագրում 4 /չորս/ տարի ժամկետով:**
2. Հավատարմագրում շնորհելու որոշման հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում ՈԱԱԿ-ին ներկայացնել փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման վերանայված ծրագիր և համապատասխան ժամանակացույց՝ հաշվի առնելով **«Հետազոտություն և զարգացում», «Արտաքին կապեր և միջազգայնացում», «Որակի ապահովման ներքին համակարգ»** ոլորտներում առկա խնդիրներին առաջնահերթ լուծում տալու անհրաժեշտությունը:
3. **Հատուկ ուշադրություն դարձնել.**
   - իրականացվող գործընթացների արդյունավետության գնահատման հստակ և չափելի կատարողականի որակական և քանակական ցուցիչներ ունենալու անհրաժեշտությանը,
   - վերլուծությունների, հստակ քանակական և որակական տվյալների վրա հիմնված որոշումների կայացմանը և հաշվետվությունների իրականացմանը,
   - արդյունքահեն կառավարման համակարգի բարելավմանը, բարելավման գործընթացներին արտաքին շահակիցների ներգրավմանը,
   - կրթական ծրագրերի մշակման և վերանայման, ինչպես նաև որակի ապահովման գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավմանը,
   - հեռակա կրթաձևի առանձնահատկություններին և դրա որակի ապահովման մեխանիզմների կիրառմանը,
   - բոլոր գործընթացներում ՊԻԳԲ շրջափուլի կիրառմանը,

- հետազոտական գերակայությունների վերհանմանը և ըստ այդ գերակայությունների հետազոտության ռազմավարության ձևավորմանը,
- ուսումնառության և հետազոտության կապի ամրապնդմանը,
- Համալսարանի գործունեության վրա որակի ապահովման գործընթացների ազդեցության բարձրացմանը:

4. Կազմակերպել ԳՊՀ-ում իրականացվող մասնագիտության կրթական ծրագրերի ներքին աուդիտ արտաքին փորձագետների ներգրավմամբ:
5. «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգի 12-րդ կետի պահանջներին համապատասխան 2 տարի մեկ անգամ ՈԱԱԿ-ին գրավոր զեկույց ներկայացնել իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ՝ գնահատելով ակադեմիայի գործունեության բարելավումը, նորարարություններն ու ձեռքբերումները:
6. Հանձնարարել ՈԱԱԿ-ին պարտադիր մշտադիտարկման ենթարկել ԳՊՀ-ի գործունեության արդյունավետությունը՝ ըստ առաջընթացի առանցքային ցուցիչների:
7. Որոշումն ուժի մեջ է մտնում հավատարմագրման պետական գրանցամատյանում գրանցվելու պահից:

Հավատարմագրման Հանձնաժողովի
նախագահ **Ա. Սաղյան**
2021 թ. հոկտեմբերի 22
ք.Երևան